Տոլորս

Բնակչություն՝ 406

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 112կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 8 կմ,
Կենտրոնի բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1720 մ,
Կարգավիճակը՝ լեռնային,

Գյուղը հիշատակում է Սյունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանը՝ օգտագործելով Տոլորք ձևը: Գյուղի մասին տեղեկություններ է հաղորդում նաև Ղևոնդ Ալիշանը վկայելով, որ մոտավորապես 1890 թվականին «Տոլորս ուներ 140 տուն բնակիչ»: Հին Տոլորսը կապված Որոտանի ՀԷԿ-երի կասկադի հիդրոհանգույցների շինարարության հետ մնացել է Տոլորսի ջրամբարի տակ:
Ներկայիս Տոլորս գյուղը կառուցված է ուղիղ ջրամբարի ափին: Հին Տոլորսում բացվել են ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի քարե դամբարաններ, որտեղից հայտնաբերվել են ոսկե զարդեր, բրոնզե արձանիկներ: Գյուղի մոտակա բլուրների վրա գտնվում է միջնադարյան գերեզմանատուն՝ երկթեք և օրորոցաձև տապանաքարերով:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 116 գյուղացիական տնտեսություն:
Անասնագլխաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է.
- խոշոր եղջերավոր անասուններ՝ 340 գլուխ,
- մանր եղջերավոր անասուններ՝ 1017 գլուխ,
- խոզեր՝ 20 գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 65:
Համայնքում 2011թ. կատարվել է հացահատիկային մշակաբույսերի 120 հա աշնանացան:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 2858 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2408 հա, որից՝
- վարելահող՝ 607 հա, արոտ՝ 1378 հա, այլ հողատեսք՝422 հա
- բնակավայրերի հողեր՝ 34 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 4 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝23 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 1 հա,
- անտառային հողեր՝ 204 հա, որից անտառածածկ՝ 204 հա
- ջրային հողեր՝ 185 հա